



ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «Եվրոթերմ» ՓԲԸ (այսուհետ Ընկերություն) 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2023թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է Ընկերությունը:

Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ





«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն)

2023 թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2023 թվականի ընթացքում Ընկերությունն արձանագրել է սովորական գործունեությունից 1,934,310 հազար դրամի հասույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,837,460 հազար դրամի համեմատ աճելով մոտ 5 տոկոսով: Ծավալային/քանակային իրացումները աճել են 10%-ով, սակայն հաշվի առնելով որ հասույթի 51%-ը արտաժույթով է, և որ 2023 թ.-ին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի համեմատ արժևորվել է շուրջ 10 %-ով, դրամային արտահայտությամբ աճն ավելի քիչ է:


Ստորև աղյուսակում ներկայացնում ենք հաշվետու տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը՝ հոդվածների աճման և նվազման նշումներով:

		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.			
Հասույթ	16	1,934,310	5.3%	1,837,460
Վաճառքի ինքնարժեք	17	-1,315,597	7.1%	-1,228,478
Համախառն շահույթ (վնաս)		618,713	1.6%	608,982
Այլ եկամուտ	18	221,692	-12%	252,243
Հավաքված բերքի իրական արժեք		62,249	-9.4%	68,734
Այգիների մշակման և պահպանման ծախսեր	19	-165,005	14.3%	-144,371
Իրացման ծախսեր	20	-209,396	14%	-183,758
Վարչական ծախսեր	21	-104,404	-2.6%	-107,205
Այլ ծախսեր	22	-97,963	-28%	-136,419
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)		325,886	-12%	358,206
Ֆինանսական հոդվածներ	23	-45,082	252%	-12,811
Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս	24	-114,205	-130%	381,897
Շահույթը (վնասը) մինչև հարկերը		166,599	-77%	727,292
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	25	-47,437	14%	-7,929
Տարվա զուտ արդյունք		119,162	-83%	719,363
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-		-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		119,162	-82%	664,630


Հասույթ

Ստորև աղյուսակում նշված են Հնկերության հիմնական գործունեության ուղղությունները և դրանց 2023 թ-ին հասույթի փոփոխությունները 2022 թ-ի նկատմամբ՝ ըստ արտահանման և տեղական իրացումների:

	Տեսակարար կշիռը 2023 հասույթում	Աճ / Նվազում 2022-ի համեմատ
Գյուղատնտեսական արտադրանք	1.18%	-32%
Արտահանում	0.60%	-38%
Տեղական շուկա	0.58%	-36%
Բեռնափոխադրումներ	1.02%	-30%
Մուրաբաներ և Պահածոներ	40.24%	21%
Արտահանում	31.01%	6%
Տեղական շուկա	9.23%	139%
Ջեռուցման համակարգեր	3.76%	-47%
Խտանյութեր Երևանի գործարան	0.22%	-89%
Արտահանում	0.00%	-100%
Տեղական շուկա	0.22%	91%
Խտանյութեր Վանանդի գործարան	0.00%	0%
Արտահանում	0.00%	0%
Տեղական շուկա	0.00%	0%
Այլ վաճառքներ	7.73%	59%
Արտահանում	3.14%	23%
Տեղական շուկա	4.58%	98%
Ծառայություններ	1.27%	-12%
Հյուրեր	44.58%	0%
Արտահանում	16.19%	-7%
Տեղական շուկա	28.40%	4%
Ընդամենը սովորական գործառնական եկամուտներ		5%



Արտահանումները կազմում են հասույթի կեսից ավելին:



Ընդհանուր հասույթի աճին նպաստել է մուրաբաների և պահածոների թե՛ տեղական շուկայում և թե՛ արտերկրում, ինչպես նաև հյութերի տեղական շուկայում վաճառքների աճը:

Ընկերությունն Արմավիրի մարզում ունի մոտ 200 հա սեփական այգիներ՝ ծիրանի, դեղձի, կեռասի, սալորի, խնձորի, խաղողի: Բերքի զգալի մասը վերամշակվում է սեփական գործարաններում, ինչպես նաև իրացվում է շուկայում: Գյուղատնտեսական արտադրանքի բերքատվությունը 2023 թ.-ին միջինից ցածր էր, դրանով պայմանավորված հասույթի անկում է արձանագրվել:

Մուրաբաների և պահածոների 139% աճը պայմանավորված է նշված խմբի արտադրանքի իրացման ուղղությամբ կատարված ավելի ակտիվ գործողություններով, ինչպես նաև մրցույթում հաղթող ճանաչվելու արդյունքում սահմանափակ գորքերի հետ կնքված պայմանագրի ներքո սննդամթերքի մատակարարումներով:

Բեռնափոխադրումների շուկայում մրցակցային գների առկայության և միաժամանակ համեմատաբար բարձր ինքնարժեք ունենալու պատճառով Ընկերությունը 2023 թ.-ին նվազեցրել է սեփական ավտոտրանսպորտով դեպի ՌԴ բեռնափոխադրումների քանակը, դրա հետևանքով նվազել են ՌԴ-ից Հայաստան ապրանք ներմուծողներին մատուցվող բեռնափոխադրության ծառայությունների ծավալները:

Վանանդ գյուղում գտնվող խտափայտերի գործարանը վնասվել էր 16/09/2021թ. հրդեհից և ամբողջ 2022 թ.-ին ու 2023 թ.-ի հիմնական սեզոնին այն արտադրանք չթողարկեց: Գործարանը ապահովագրված էր ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում, և վերականգնման ամբողջ ծավալի համար 2022-ի վերջին և 2023-ի սկզբում Ընկերությունը ստացավ ապահովագրական հատուցում: Վերանորոգման աշխատանքները ավարտվեցին 2023 թ.-ի վերջում և 2024 թ.-ին գործարանը կկարողանա թողարկել խտափայտեր, որոնք հիմնականում արտահանվում են: Նշենք որ Երևանում գտնվող խտափայտերի արտադրամասում թողարկվում է հիմնականում սեփական հյութերի արտադրության համար հումքեր:

Ընկերությունը ունենալով ազատ արտադրական հզորություն կատարում է նաև պտուղների վերամշակման և շալցման ծառայություններ հայաստանյան գործընկերների համար: 2023 թ.-ին այդ ծառայությունների գծով հասույթը նվազել է մոտ 12%-ով, պայմանավորված Վանանդի գործարանի չաշխատելով:

Ջեռուցման համակարգերի ուղղությամբ Ընկերությունը վերջին տարիներին ավելի պասիվ ռազմավարություն է վարում, շարունակելով ՀՀ-ում ներկայացնել մի շարք առաջատար միջազգային արտադրողներին, և կենտրոնանալով ավելի շատ արտադրության և գյուղատնտեսության մեջ: Ապագայում,

հաշվի առնելով Ընկերության այս ոլորտում ունեցած փորձն ու բարի համբավը, դիտարկվում է որոշ ակտիվության ավելացում:

Ընկերությունը 2024 թվականին պլանավորում է ընդլայնել արտահանման աշխարհագրությունը, ինչպես նաև խթանել վաճառքների աճը բոլոր եղած շուկաներում: 2024 թ. փետրվարին արտադրանքը ներկայացրեցինք ԱՄԷ Դուբայ քաղաքում սննդի և խմիչքների ամենամեծ՝ «Gulfood 2024» միջազգային ցուցահանդեսին: Այս տարի Ընկերությունը մասնակցելու է հոկտեմբերին Փարիզում կայանալիք «Sial-2024» սննդի և խմիչքի միջազգային և նոյեմբերին Չինաստանի Շանհայ քաղաքում 7-րդ միջազգային ներմուծման ցուցահանդեսներին:

Վաճառքի ինքնարժեք

Չնայած ինքնարժեքի որոշակի աճի, Ընկերությունը, հաշվի առնելով հիմնական գնորդների խնդրանքը, արտահանման գները վերանայել է միայն 2023 թ.-ի վերջում, այդ իսկ պատճառով վաճառքի ինքնարժեքի աճը կազմել է 7%, մի փոքր գերազանցելով վաճառքի աճը:

Այլ եկամուտ

Այս հոդվածը հիմնականում ներառում է Վանանդ գյուղում գտնվող խտափայտների գործարանի համար ստացված մոտ 160 մլն դրամ ապահովագրական հատուցումը, այլ պաշարների վաճառքներից (օտարումներից) եկամուտները և արտարժույթի վերազնահատման արդյունքում առաջացած եկամուտները:

Հավաքված բերքի իրական արժեք / Այգիների մշակման և պահպանման ծախսեր

Չնայած գյուղատնտեսական արտադրանքի հաշվետու տարում ցածր բերքատվությանը Ընկերությունը կատարել է այգիների պահպանման և բարելավման բոլոր աշխատանքները: Պետք է հաշվի առնել որ այգիների էական հատվածը դեռևս չի մտել ակտիվ արտադրական փուլ, ուստի կարելի է կատարված ծախսերի և հավաքված բերքի արժեքի բացասական տարբերությունը համարել այգիների կապիտալացում:

Իրացման ծախսեր

Տեղական շուկայում վաճառքները ակտիվացնելու նպատակով Ընկերությունը ընդլայնեց վաճառքի բաժնի կազմը, ներառելով նոր վաճառքի պատասխանատուներ և վերահսկողներ: Ավելացավ աշխատավարձի ֆոնդը, ինչն անդրադարձավ իրացման ծախսերի 14%-ով աճելու վրա:

Վարչական ծախսեր

Վարչական ծախսերը նվազել են 2.6 %-ով:

Այլ ծախսեր

Այս հոդվածը հիմնականում ներառում է այլ պաշարների օտարումից, պաշարների արժեքի փոփոխությունից, դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսեր, տույժեր, տուգանքներ, դատական ծախսեր, արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, Հ/Մ պահպանման, լուծարման ծախսեր, փոխհատուցելի բացակայությունների գծով ծախսեր:

Ֆինանսական հոդվածներ

Հաշվետու տարում ստացված վարկերից տոկոսային ծախսերը կազմել են 191,869 հազ. դրամ, նվազելով 1.7%-ով:

Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս

Այս հոդվածը արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտների և ծախսերի, հիմնական միջոցների օտարումից եկամուտների և ծախսերի, ոչ ընթացիկ նյութական և ՈՆԱ վերաչափումից կորուստների և անհատույց տրված ակտիվներից ծախսերի հանրագումարն է:

Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլիով պարտավորություններ (վարկեր, փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, ստացված կանխավճարներ), ինչպես նաև նույն արժույթներով դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ: 2023-ին ի տարբերություն 2022 թ.-ի արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտների և ծախսերի տարբերությունը բացասական էր, դրանով է պայմանավորված այս հոդվածի վնասի այսպիսի ավելացումը:

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

2023 թ.-ին Ընկերության ֆինանսական պարտավորությունները նվազել են 9%-ով: Էական փոփոխություն է տեղի ունեցել պարտավորությունների կառուցվածքում: Ընկերությունը զգալի նվազեցրել է բանկային վարկերի մասնաբաժինը ընդհանուր պարտավորություններում, ներգրավելով լրացուցիչ անտոկոս փոխառություններ սեփականատերերից և թողարկելով կորպորատիվ պարտատոմսեր:

	<i>(հազ. դրամ)</i>	
	2023թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Ստացված փոխառություններ	1,017,457	970,103
Բանկային վարկեր	841,159	1,312,876
Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ	42,429	22,519
Պարտատոմսեր	212,775	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	38,625	58,977
Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ	2,152,445	2,364,475

Ռիսկեր և անորոշություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների մոտ 49% իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլով: Բացի այդ Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով վարկեր և փոխառություններ:

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից:

Ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունը դրամական հոսքերը կառավարում է այնպես որ հնարավորինս նվազեցնի արտարժույթի փոխանակման գործարքները: Նույնը հաշվի է առնվում նաև լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու դեպքում:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն և լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն և լողացող տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Հանդես գալով որպես գյուղատնտեսական արտադրանք արտադրող և վերամշակող հիմնարկ՝ ներկայումս Ընկերությունը հիմնականում ներգրավվում է պետության և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տարբեր ծրագրերով սուբսիդավորվող տոկոսադրույքով պարտքային գործիքներ, մասնավորապես՝

- վարկեր՝

- գյուղ. մթերքների ձեռքբերման նպատակով՝ ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում.
- նոր մեքենասարքավորումներ ձեռք բերման նպատակով արտադրական կարողությունների արդիականացման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում.

- պարտատոմսեր՝ թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրի շրջանակներում.

- լիզինգ՝ արևային կայանների և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման նպատակով տոկոսադրույքի սուբսիդավորման և մասնակի դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են մեծ քանակությամբ հաճախորդներ տարբեր արդյունաբերական և աշխարհագրական գոտիներում: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Շնկերությունը գրավ չի վերցնում: Բացի այդ Շնկերությունը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:


Հետաձգված վճարումներով արտահանումների դեպքում նոր և որոշ հին գործընկերներին մատակարարված ապրանքի դիմաց չվճարման հետևանքով կրած հնարավոր ֆինանսական վնասները ապահովագրվում են «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲ Շնկերությունում:

զ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Շնկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Շնկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Շնկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Շնկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից հիմնականում վարկային պայմանագրերի պայմանները խախտելու և որոշ բանկերից ստացված վարկերի ամբողջ գումարը ընթացիկ դասակարգելու պատճառով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 2 ամսվա ընթացքում:



Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն



Լյուդմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

